

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը
և 7 ամսականը 6 ռուբլի.
Առանձին համարները ՄՇԵՆ ՏԵՂ. 5 ԿՕՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատները.
Մեր հասցեն՝ Тифлисе, редакция „Мшакъ“
Сергиевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տէլեֆոնը № 2-53.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերէն).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզով
Յայտարարութիւնները համար վճարում են
և բաժանելը տողատեղին 20 կօպէկ.
Տպարանի տէլեֆոնը № 67.

ՇԱՐԱԹՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՄՇԱԿ

ԲԱՐԱՆՔԱՆ ԵՒ ԳՐԱԳԱՆՔԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1913 թ. ՀԱՄԱՐ

ԲԱՐԱՍՈՒՆԵՐԿՈՒՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ. «Մշակ» տարեկան գինը 10 ռուբլի է, 11 ամսականը՝ նոյնպէս 10 ռ., 10 ամսականը՝ 9 ռ., 9 ամսականը՝ 8 ռ., 8 ամսականը՝ 7 ռ., 7 և 6 ամսականը՝ 6 ռ., 5 ամսականը՝ 5 ռ., 4 ամսականը՝ 4 ռ., 3 ամսականը՝ 3 ռ., 2 ամսականը՝ 2 ռ.: Փետրվարի 1-ից մինչև մարտի 1-ը 85 կօպ.

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Նորայայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 լրաշ.

Հասցեն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակադրով.
Հին բաժանորդները ինքնուրուի կ'ստանան փոխադրական ըսանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով:

ՊՐԷՄԻԱՆԵՐ

«Մշակ» տարեկան այն բաժանորդները, որոնք 1913 թ. համար (սկսած յունվարի 1-ից) միանուսալ կամ մասնաւոր վճարած կունենան 10 ռուբլի բաժանորդականքը. կը ստանան **ՁԻՐԱԲԱՐ** հետևեալ 2 գրքերը.

1) „Մշակ“ և „հայ կիկլ“, մինչև 1891 թ. «Մշակ» մէջ լոյս տեսած առաջնորդները, յօդուածները և բանասիրականները, որոնք նուիրված են կանանց հարցին ընդհանրապէս և հայ կնոջ առաջնադասական գործին մասնաւորապէս: Գիրքը բաղկացած է 7+294 մեծադիր էջից, տպված լաւ թղթի վրա, Գր. Արծրունու մեծադիր գրատիր պատկերով և մօզաիկ-նկար շապկով—հայ կնոջ էմբլեմային պատկերով:

2) „Մշակի“ քառասունամեակ“ Լ. Դանիէլեանի կողմած, 1872—1912 թ.թ., 132 էջ, տպված լաւ թղթի վրա: Գրքի մէջ ամփոփված են Գր. Արծրունու, Անդր. Արծրունու, Բաժ. Ֆիլի, Գ. Ստորոպկանի, Ա. Արփիարեանի, Յ. Տէր-Մարկոսեանի, Ա. Լալայեանի և Ն. Առաքելեանի պատկերները:

«Մշակ» ոչ բաժանորդների համար անուշին գիրքն արժէ 1 ռուբլի, իսկ երկրորդ գիրքը՝ 50 կօպ: Ծանապահածախքը՝ 15—20 կօպ. գնողի վրա
Մեր հասցեն՝ ТИФЛИСЬ, Редакция „МШАКЪ“. Արաստահանից՝ ТИФЛИС, Rédaction du journal „MSCHAK“.

ԱՊՐԱՒԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՍ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ 2Է ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՆԼԻԺՈՒՄ

Կիրակի, յունվարի 20-ին, կը կայանայ

ՀԱՄԱՐ Գ

Ս.ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԿԱՅՏԵՐԱԿԱՆ ԿՕՆՍԵՐՎԱՏՈՐԱՅԻ ՊՐՕԳՆՍՏՈՐ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ

Սկիզբն է երեկոյեան ժամը 8½-ին:

Տոմարները վաճառվում են պ. Սուզանձեանի մուգիլի խանութում, իսկ համաբոյ օրը առ. ժ. 10—2 լ. և եր. ժ. 6-ից դանիէի մուտքի մօտ:

ՄԱՆԵՐԱՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՅԻՆԱՆԵՐՈՒՄ ԵՒ ՊՐՕԳՆԱՄԵՐՈՒՄ:

առ. Ծ. 5—4

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Շաբաթ, յունվարի 19-ին

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ ԿՐՆԵՐԿԱՅՆԷ

ԵՒ ՓԻՆԷ

Դրամա 3 արար, հեղին. Շերվանդադէի:
Մասնակցում են. տ. տ. Արմէնեան, Արուսեան, Ջաբէ, Լիւսի, Յասմիկ, պ. պ. Արէլեան, Արմէնեան, Բերդեան, Ղազարեան, Մամիկոնեան, Յարութեան և Տէր-Առաքելեան:

Սկիզբն է երեկոյեան ժամը 8-ին

Բեմխօսք՝ Ա. ԱՐՄԵՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կիրակի, յունվարի 20-ին, Թիֆլիսի Վանքի աւագ եկեղեցում, պատարագից յետոյ, ժամը 12 ին, կը կատարվի ՀՈՅՀԱՆՆԵՍ յայտնի գործիչ, ուսուցիչ և «ՄԵՆՈՒ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ» լրագրի խմբագիր

ՊԵՏՐՈՍ ՍԻՄԵՆՆԵԱՆԻ

մանկան երկրորդ տարեգարծի առիթով և տեղի կունենայ յուշարձանի բացումը:
45. 2—1

ԵՂԲ. Ա. ԵՒ Ա. ՄԻԼԵԱՆՆԵՐԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ

ԳՕԼՕՎԻՍԿԻ ՊՐՕՊԵԿՏ, ԿԱՐԵՏՍԿԻ ԿՕՐՊՈՐԱՏԻ ԴԻՄՍԸ:

Նախորդ տարիների օրինակով ՏԱՐԵԿԱՆ ՄԷԿ ԱՆԳՄԱՄ միայն

ՆՇԱՆԱԿՎԱԾ Է 7 ՕՐՈՎ

Յունվարի 19-ին, 21-ին, 22-ին, 23-ին, 24-ին, 25-ին, 26-ին 1913 թ.

ՄՆԱՑՈՐԴ ԿՏՈՐՆԵՐԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԲ

ՆՈՑՆՊԷՍ ԵՒ ՈՅՆ ԲՈԼՈՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ՈՐՈՒՔ ՄՆԱՑԵԼ ԵՆ ՁՄԵՐԱՅԻՆ ՍԷՁՈՒՆԻՑ

ՄԵԾ ԶԵՂԶՈՎ

Մեծաբէ, բրդէ, մանուշէ, քաթանէ և բամբակէ ապրանքներ, սփռոցներ, վերմակներ, պլէդներ, ՊՐՏԻԵՐՆԵՐ և ՏԻԼԷ:
ՄԵԾՈՒԳԻ ԱՊՐԱՆՔՆԵՐ ԸՆԴԼԻՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍԵԿԱՆ ՖԻՐՄԱՆԵՐԻ:

Ծաղի ժամանակ խանութը փակ կը լինի ցերեկվայ ժամը 2½-ից մինչև 4-ը:

(Զ. Ե.) առ. 33. 3—2

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԵՏՐՈՆ

ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, ՅՈՒՆԻՎԱՐԻ 21-ԻՆ

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ

ՀԱՍՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՏԱՆԻ ԶԱՆԿՈՒԹԵԱՆ

Կը ներկայացնեն—Երկրորդ անգամ, նոր պիէս ՇԱՆԻՐԻ

ԱՐԺԱՆԱՑԱԾ ԺԻՒՐԻՒՄ ՄՐՑԱՆԱԿԻ

ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ

Դրամա 4 արար, և 12 պատկերով:

Մասնակցում է ամբողջ խումբը:

Սկիզբը երեկոյեան ճիշդ ժամը 8-ին—վերջը ժամը 12½-ին:

Տեղերի գները պակասեցված են:

ԱՁԴ.—Ա. ԱՐՄԵՆԵԱՆԻ բեմադրող յետաձգված է յաջորդ երկուշաբթի, յունվարի 28-ին Յունվարի 21-ի համար առկած տոմարները պահում են իրանց ոյժը յունվարի 28-ի համար:

Բեմխօսք՝ Ա. ԱՐՄԵՆԵԱՆ

Վարչութեան հերթապահ անդամներ՝ Գ. Կաֆեան, Ք. Տէր-Սարգսեան
40. 3—1

ԿՈՎԵԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԵՐԿՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԱՐ

Նշանակված է այսօր, շաբաթ, յունվարի 19-ին, երեկոյեան ժամը 7-ին, Ընկերութեան դահլիճում (Արաս-Արաջեան դրապարակ, № 7, սեփ. տուն):

Ձեռագործների առաքելներն են:
1) Ուսուցչական ֆոնդի հրահանգի քննութիւնը և հաստատումը:
2) Գնորդների և ճիւղերի 1913 թ. նախահաշիւների քննութիւնը և հաստատումը:
3) Ընթացիկ հարցերը:
(Զ.) առ. 32. 2—2

Գ. Գ. ՄԵՅՐԱՐԵԱՆՑ

Երեկոյեան համարադրանքի

ԲԺՇԿԱՊԵՏ

Երեկոյեան համարադրանքի կրթիչ, ԲԺՇԿԱՊԵՏ և օրերի:
Բժշկութեան նախ աստիճանական դասը, ԲԺՇԿԱՊԵՏ պրոֆ. Գրառնիով և Երեկոյեան համարադրանքի:

Ընդունվում ամեն օր, ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
առաւօտեան ժամը 9—12-ը և երեկոյեան ժամը 5—7-ը:
Սոյալի, ԲՆՈՐՈՒՄԻ փող. № 23 (անկիւն Դանիէի պայտ)՝ Հեռախօս 1—82.

(ա. օ.) առ. 699. 100—95

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԻՃԱԿԸ

1

Կայ, արդեօք, ներկայումս հայկական հարցը եւրոպական դիւանագիտութեան համար թէ ոչ:

Չը կար մինչև այժմ:

Չը կար, իբրև հերթական քննութեան առարկայ:

Բայց նա կարող է այժմ լինել և մօտենում է իր պաշտօնական հերթականութեան:

Հանգամանքները կարող են զասաւորվել այդ հարցի լուրջ քննութեան և լուծման համար:

Յիշե՛ք, թէ ինչ վիճակի մէջ էր հայկական հարցը քաղկեդոնական պատերազմից առաջ. Շատ թույլ արդարաւորված մի յայտարարութեան վիճակում:

Եւ քաղաքագիտական շրջանների համար նա գոյութիւն չունէր, իբրև հերթական և արդիւ հարց:

Այդ պատճառով, երբ նա հանդէս եկաւ ասպարէզում, նա համարվեց արհեստական կերպով առաջ մղված, և վերադրվեց այս ու այն պետութեան ազդեցութեան կամ դրանց դիտաւորութիւնների գործարարութեան:

Պատերազմի ժամանակ էլ նա մնաց իր սպառնալիքի վիճակում:

Ճիշդ է, Գ. Յուրի ազգ. պատրիարքարանը դեռ օգտատու ամսին փորձեց բողոքներ յայտնել օսմ. կառավարութեան հայկական նահանգներում տեղի ունեցող ոճրագործութիւնների մասին. դեռ այն ժամանակ Արշարունի պատրիարքը դիմում արեց էյմլաճին, զեկուցանելով իրենի աննախնաճելի վիճակի մասին, իսկ այդպիսով հայտնեց զգալուն գործողները հրաւիրեցին ուսանողների և ուրիշ երկրներում ապրող իրանց եղբայրակիցներին ուղարկելու թիւրքմանի դրուժեան վրա: Այդ, այդ այդպէս էր, բայց և այնպէս հայկական հարցը չէր դրւում այն պետութիւնների ուղարկութիւնը, որոնք ստորագրել էին Բեռլինի դաշնագրը:

Սակայն թիւրքական դառն իրականութիւնը ինքը սկսեց հասունացնել հարցը:

Եւ բաւական հասունացրեց:

Հասունացրեց, անշուշտ, այդ չը ցանկանալով, այլ գուցէ նոյնիսկ իրատեսակ բարեկամական խորհուրդներ յղանալով: Արդարեւ, թիւրք կառավարութիւնը շրջաբերական կարգադրութիւններ ուղարկեց զաւառական մարմիններին առաջին անգամ այն ամեն անպատեհութիւններին, որոնք կարող են փնտել հայերին և պատճառ դառնալ բարդութիւնների:

Բայց օսմ. իրականութիւնը ուրիշ տրամաբանութեան շաղկիւններ էր բացում:

Հէնց այն ժամանակ, երբ կենտրոնական կառավարութիւնը, անկեղծօրէն թէ՛ բռնադատված, հանգստացնում էր մաքերը, նոյն այդ ժամանակ թիւրքաշայտատում իբրև մղձաւանջ կանգնած էր ջարդերի ողորակման և զազանային ոճրագործութեան սպառնալիքը:

Եւ ահա օրեր, շաբաթներ և ամիսներ անցնում են սպառնալիքների երկիւղի տակ:

Չը կայ մասսային կոտորած. բայց նա կարող է բռնկվել ամեն մի քաղաքում, իսկ ամբողջական զազանութիւններ, բայց առանձին-առանձին կատարվող ոճրների թիւը սարսափելի մեծ է. Ամենքը վախեցում են մէ. կը միւսից. Ոչ ոք չէ վստահանում ապատօրէն երթեկեկ երկրի մէջ:

Երկրորդ, սպառնալիքի մղձաւանջը պատել է երկրին:

Ամեն մի օր, որ անցնում է խաղաղ, համարվում է դիւտ, մի բաղաւոր դէպք:

Անշուշտ, այդպէս շարունակվել չէ կարող կենսաբ. Անշուշտ, անբաժնի է զրական լուծում մի հարցի, որ ինքը կենցաղը դրել է ասպարէզի վրա:

Գ. Յուրի պատրիարքարանը փորձեց առանձին-առանձին տեղի ունեցած ոճրագործութիւնները հաւաքել և համադրւմաբէ. Ստացվեց մի ստակալի նկարագիր, նորից կանգնեցին բոլորի յիշողութեան առաջ անցեալ շաբաթի և արհաւիրքների նախերգանքները:

Երկրորդ և ժողովուրդը լսել էին. եւ այդ լուրերը սրտամաշ ու մարտիրոսական մի լուրերն էր:

Այդ լուրերն անունն էր՝ երկիւղ. ժողովուրդը կուլ էր տալիս արտասուքներ, հաշտվում էր չորս կողմը կատարվող ոճրների հետ, միայն թէ հանրային շարժեր չը սկսվեին, Սասունի, Ուրֆայի, Ակիի արհաւիրքները չը կրկնվեին:

Ժողովուրդի համար մի բան միջթարական էր. որ նա տեսնում էր կենտրոնական իշխանութեան կողմից մի որոշ ատորձան բարեացակամութիւն դէպքի ինքը:

Եւ նա ապրում է անկարելի կապուցութեան մէջ, չը հաւատալով վաղվայ օրին:

Հայկական ցան ու վիշտը արձա. գանձերը դառն թիւրքալից դուրս և նրանք սկսեցին բաղկել բոլոր դռները, հայցելով դարման և օգնութիւն:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը դիմեց ռուս կառավարութեան, նկատաւրդեց թիւրքաշայ իր հօտի անասանի վիճակը և խնդրեց նրա աջակցութիւնը ապահովելու թիւրքաշայ ժողովուրդի կենսաբ. զոյրը, իսկ և խաղաղ կառավարական զարգացումը:

Վեհափառ Կաթողիկոսը ինքը իր կողմից ոչ մի անհրաժեշտ արեւ թէ ինչ ձև կարող էր ստանալ թիւրքաշայի կենսաբ. բարեկամական հարցը գործնական առաջ. Դա թողնված է Ռուսաստանի և միւս պետութիւնների բարեկամացողութեանը:

Այդ պատճառով այն բոլոր առաջարկները և բանաձևերը, որոնք հօտեղէս են գալիս զանազան տեղերում և լայն են տեսնում Եւրոպայի կամ Ռուսաստանի մամուլի էջերում Թիւրքաշայադատների բարեկամութեանը այս ու այն կազմակերպութեան մասին կրում են միայն մասնաւոր և դիպուկաժական բնաւորութիւն և չունեն ոչ մի ազգային ընդհանուր նշանակութիւն, մասնաւոր այն պատճառով, որ Կաթողիկոսը արել է և անում է իր յայտարարութիւնները, կրեալով իրենի դրութեան ոյժը և աչքի առաջ ունենալով հայ ազգի զանազան տեղերի արամադրութիւնները:

Ա. Բալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հնո. Դործ.)

17 յունվարի

Պետերբուրգ. Պաշտօնը թողնող իտալական դեսպան Միլեֆոլի հետ եղած ինտերվիւ, որի ժամանակ Միլեֆոլը պնդել է թէ՛ իբր Աւստրիայի և Րուսիայի միջև 1900 թ.ից գոյութիւն ունի գաղտնի պայմանագիր. «Պոլ. Կոր.»-ի տեղեկութեան համաձայն՝ այդ պայմանագրութիւնը մտացածին է. նման պայմանագիր երբեք գոյութիւն չէ ունեցել:

Վիէննա. Տեղիս լրագրիներից մի-նում տպված է Միլեֆոլի հետ եղած ինտերվիւ, որի ժամանակ Միլեֆոլը պնդել է թէ՛ իբր Աւստրիայի և Րուսիայի միջև 1900 թ.ից գոյութիւն ունի գաղտնի պայմանագիր. «Պոլ. Կոր.»-ի տեղեկութեան համաձայն՝ այդ պայմանագրութիւնը մտացածին է. նման պայմանագիր երբեք գոյութիւն չէ ունեցել:

Լոնդոն. Ճանապարհորդող Լէմիգա տնր Կենտրոնական Ասիական Ընկե-

հնո: զո Մուսա և Բեառիմ աւարականեօն

Պահ մի, թուում է, նա ազդելու է Մա-
րիամ իշխանուհու այն խոսքերից, թե հ-
կեղծիքն երկուսով կատարվում են իրանց
սիրով Աստուծոյ համար Վանահօր դիմաց
ծառանդում է հիմնադրութեան ձայնը (ճեր-
մակաւոր), որ աստի պատրաստվում է
ցնծալ վանահօր մատաղաւ գայթակղու-
թիւնից, պարտութիւնից, և սակայն վեր-
ջինս յանկարծ ժողովում է իր կամքի բո-
ւանակ ոյժը, շնորհակալ վանում է կանացի
մեղքի պատճառը և հաստատակամ վճռում
է իր անկեղծը Դարձնալ տարվելով միա-
տեղ ներշնչանքով, նա հակառակ հին
աստուածները ուրախութեան առաջադրում
է իշխանուհու անմիջապէս հետանալ Սա-
մաքսեղեցից: Չը բաւականապէս զբաւով,
նա վճռում է քանդել մեղքի վրա հիմնված
հեղեղները...

Այս եկեղեցին նուիրւում չէ մեր Աստու-
ծուհի Այս եկեղեցին երբ ես կը շինէի,
ես դեռ կարուած չէի աշխարհէն... Ես կը
կարծէի թէ կարուած եմ: Մտքը բոլորս այլ
որ թողնէր նա աշխարհը ու եկեր անա-
պատ, մեր հողին խորքը դեռ մեծ կտոր
մը աշխարհ էր: Բերքը մեզի հետ, ներ-
քին վայելքի ծածուկ կարօտ մը, քաղա-
րուած հանգիստը բարակ ծառա մը, մեր
անցած կեանքի, կտուր ու յուզումները
մտքով նուրբ ու կաշուի ցանց մը, և ա-
կանալ վերջուշերտ Այս բոլորը դեռ մեզի
հետ էր, երբ այս եկեղեցին կը շինէինք:
Այդ ծածուկ, քաղաքակաւ յուզումներն
էինք մեր, մեր եկեղեցին, աշխարհէն անապատ
եկած, մեզի հետ ներս ապրեալ աշխարհի
այդ կտորն է շինքը այս եկեղեցին: Աշ-
խարհէն է այդ եկեղեցին, մեր Աստուծունը
չէ: Աստուծոյ կամարներու տակ մենք այլեւ
աղօթել չենք կրնար. այդ կամարները
պէտք է քանդուին:

Քանիցս եւ շինքը նոր մենք ինքներս
Աշխարհէն եկած դարձաւ աշխարհիկ դէպ-
քանութիւնը: Նուէրն է, աշխարհէն եկած
վարդապետը աշխարհիկ հասկացողութիւն
է, աշխարհի արտաքին: Մտքը ինք միայն
կրնայ շինել իր Աստուծուն նուիրուած
ստանալ իր մէջը: Ի՞նչ է ձեռքբերումը,
ի՞նչ խելոքութիւնը...

Ինչպիսիք անխորտակելի կամք անգամ
յիշատի միակողմանի ու փոքր ինչ չափա-
զանցված խոսքերի մէջ եւ միջնորդի նիւ-
թապալտ վանականները բողոք ու ցատում
են արտապատում, վանականը իր պար-
թե կերպարանով բոլորի մէջ տեղում
բոլոր Շառիմանի նման պաշտպանում է
իր հաստոր հանգիստը: Նա պատրաստ է
վերել ի վերջոյ միայնակ կատարանել իր
ստանալը, որի հիմքը լինելու է նրա բա-
նականութիւնը: Երբ նա կամքը և
գլխիկը՝ նրա հաստոր Այս ալեգորիկ տե-
սարանը հակադրել է Շառիմանի սոսկ նը-
բանով, որ միջնորդ ինքնուր ինքնուր
բուն է պաշտպանը, իսկ վերջում թոյլ
այստեղ, ընդհանրական, վանահօր կարծի
կամքի ոյժը վերջում աւելի է ընդլայնվում:

Եւ այդպէս՝ իր եկեղեցին վանապարկ
շինելու է ու քանդելու, միշտ եւ Աստու-
ծոյ որոնումներով, բայց երբեք չէ աւար-
տելու այն...
Պիւսի երկրորդ՝ էլ աւելի խոշոր դէմքը
— արեւմտա-նորմալ՝ վանական վանա-
հօրը Արեւմտի այն էակն է, յանձին որի
Շահիքը նոր կեանքի ձգտողն սրմիջին է
ապիւս:

Սկզբից գտնվելով ամբողջապէս վանա-
հօր ազդեցութեան տակ, արեւմտի այնու ա-
մենայնիւ դառնում է աստիճանաբար ինք-
նախորձութեան առաքելայ այն բնական օ-
րէնքի հիման վրա, թէ մի ծայրայեղու-
թիւն ստեղծում է երկրորդ ծայրայեղու-
թիւնը: Վանահօր մօտեան կենցաղը չէ
խմբովում նրանում Այլ նրա հոգում
բուն է դնում մի ուրիշ բան, որ փոթոր-
կում է նրա ամբողջ ներքինը: Իրական կեան-
քի մտապատկերները շարունակաբար գալիս
անցնում են երկտեսակութեան արեւմտի
Անա ամենից առաջ Սէլան արեւմտի
արեւ ձայնը, որ կենցաղի կարապետի հա-
կացողութեան իմաստով հնչում է հրամայա-
ղարար՝ «Գնալ կեանք, գնալ աշխարհ...»:
Համապատասխան խառնուրդ Սէլան է, որ
սկզբում լուրջ շուրջ յետոյ ընդհանրապէս
դառնում է արեւմտի համար կենսատու ա-
րեւ, առաւած զգացումները շնորհակալութեամբ
մի մէջ Սէլանի խելովիլուց աղաւթը մի
դէպք է արեւմտի համար՝ լսելու իր ներքին
ձայնին եւ երբ մի անգամ զրկեց սկզբը,
արեւմտի ներքին աշխարհի կեղծ պէտք է
ընդարձակվել: Կորը մտապատկեր, առաջ
ու հանաձ, կամու թերահաստատութիւն,
այս ամենը արեւմտի ներքին պայքարի
մէջ:

Գեղեցիկ աղջկա կերպարանով Սէլան
արեւմտի մտքը դարձնում է պղտոր ու
թղթորտ վանահօրից արժանաւոր աշա-
կերտ ճանաչված արեւմտի խոստովանում է
նրան, թէ ինքը նրա որոնումը վերջինսինքն
չէ: Նա մի անգամ արդէն գործ էր ունե-
ցել ծովի՝ կեանքի հետ, և նա այլեւ ան-
գոր էր դիմադրելու այն ներքին մղիչ ոյ-
ժին, որ անգորար ձայնում է նրան. «Ժա-
մանալ է, թող վանական անիմաստ կեան-
քը և նեւթի կեանքի փոթորիկը, նրա ա-
լիկոված գրկիլը»...

Փորձութեանը շարունակում է Այս ան-
գամ արեւմտի մտապատկերների առաքելա-
նախորձութեանը նա, որոնք կեանքի ան-
մեղ արարածներ՝ հոգիներին հետ կենցաղի
պար են բռնում արեւմտի շուրջ պայծառ
արեւի ու անուշադրող օդում: Նրանք հե-
ռանում են և միայն մի տանջող բառ չը-
պըրտում արեւմտի՝ «անընկեր», անդորդը:
Արեւմտի ներքին հնոցը ետում է. կեանքի
ձայնը նրա համար աւելի ուժեղ է լսվում:
Նրա երեւակայութեան մէջ պատկերանում
է ճգնաւորը, որի շուրջնում կայ մի խոր-
հրդաւոր խօսք՝ ունայնութիւն... Միւս կող-
մից արեւմտի պատրանք քաղաքը Սէլան
արտասանում է:

Ի՞նչ, ի՞նչ, երանքը,
Ի՞նչ, ի՞նչ, երանքը,
Ձոյդ, անուշ երանքը,
Ի՞նչ, ի՞նչ, երանքը...

Արեւմտի հոգին արդէն լցված է և մօտ
է իր պայթման: Հաղապար Սէլանի առաջ
նա անձնատուր է լինում, փարվում է
համբուրելու նրան՝ իր ցնորքին:
«Հին աստուածները ապրում են, հայր.
մենք աղօթում ենք, նրանք կապրին. մերն
է միայն խոց ու եկեղեցի, նրանց է ողջ
ընտելութիւնը...»:

Սնունդեան արեւմտի մտքի առաջ ըն-
կում է աշխարհիկ կեանքը իր կաւով ու
յաղթութեան վայելքով: Յաղթութիւնից վե-
րադարձած իշխանը իւրաքանչիւր ձոն է մա-
տաւանում սիրտը, գրեզնկութեան սրմիջ
վանահին ու Աստուծոյ: Տեսնում է այդ
ամենը արեւմտի և զգում է, որ այլեւ ան-
գոր է դիմադրելու կեանքի կոչին:
«Տես՛ր թաւ մըն ալ ինձ, ես ալ կուգեմ
խմել մէկ ունայ մը միայն վայելքի եղ-
ջիւրէն...»:

Ինչպէս կեանքի խնդրը աղօթողներին հա-
մար չէ, եթէ մարդ չէ մասնակցել կեանքի
կեանքի Արեւմտի դեռ օտար է կնոյ՝ գե-
ղեցիկութիւնն ու հմարը: Սակայն ամենից
առաջ ոյժի օրէնքը: Ու նա յարձակվում է
հաստ զորակներ իւր և սուրը խուս նրա-
նից: Այժմ արդէն նա լիակատար իրա-
ւունք ունի մասնակցել կեանքի խնդրին
ու վայելքին: Թող արեւմտի խմելու կե-
նացը, իսկ իստոյ գեղեցիկութեան՝ Վանա-
նի և Աստուծոյ...

Հին աստուածները յաղթութեան քաղ-
է: Աշխարհի մարդիկ ստիպում են արեւա-
յիկ երկրպագել, և արա ծնկները կամաց-
կամաց զգուշանում են: Երբ երանք էլ չը-
ցաւ, և արեւմտի ներքին ընդհանրապէս մօտե-
նում է լուծման վանահին: Կորը նա-
խադրուցանում է, թէ նրա մէջ զարթոնք
է դեռ: Սակայն հանգիստը վճռվում է:
Արեւմտի ներքին հոգին հանգիստի պէտք
է: Իսկ վանահայրն էլ իր երազներին
ուսին: Նա երբ օր ժամանակ է ապրիս
արեւմտի լուծելու «Ինչի թէ չը լինի»
ժանդակելու խնդիրը: Արեւմտի պէտք է
արեւմտ միայն դարձնալ վանահօր իշխանու-
թեան ներքին, թէ պէտք է վազէ ծովի
կողմը: Գնալ կեանքը, գնալ պոռթկեան
կուր մարտահրաւեր:

«Հին եկուր—ձայնում է Սէլան,—
ուր անգամ մը գրկիլ ես ինձի, ուր ալիք-
ները կը զոգային ու փոթորիկը կը գոռար:
Գնալ գնալ նոր գոյութիւն, նոր ձեւեր,
նոր էութիւն:

Եւ մտքի ամենավերջին զարկը իշխում
է: Արեւմտի փարաւորն է իր վերջին կա-
կածանքը: Նա դիմելով վանահօրը, երբ
առ նիւթապալտ վանականներին յայտնեց,
թէ պէտք է քանդել իշխանուհու կառուցած
եկեղեցին, որի փոխարէն ինքը շինելու է
սեփականը, հարցնում է:

— Ըսէ՛ք, թու այդ նոր շինքը երեւոյ պի-
տի արեւի ծագումը, պիտի լսուի փոթորիկի
ձայնը:

— Ի՞նչ:

Հինց այստեղ էլ լուծվում է ողբերգու-
թիւնը: Արեւմտի հոգին ապրաւոր յան-
գում է կեանքի գաղափարին և նա ասում
է վանահօրը:

— Անցի՛ր այն առին:

Երես զարձակելով հնչեց, արեւմտի նե-
վում է դէպի նոր կեանքը, որ զրկաբաց
սպասում էր նրան: Մոլի ալիքները իրանց
մոռական կոչն էին երգում: Արեւմտի վա-
զում է դէպի այն:

— Դէ, մնաւ բարով, կղզի, մնաւ բարով
անապատ, մնաւ բարով դուք այ, մութ-
մութ կամարները տաճարին, մնաւ բարով,
իմ աղօթքներս ու խնդրում հոգիւս, մնաւ
բարով և դու, ուղի անողը ու վեժմանդիլ
Աստուած, որուն ուղղիլ եմ իմ տնչիւս
ու աղօթքներս: Դուս, մնաւ բարով
խցիկս, իմ մենաւոր ու լռիկ խցիկս, ալ
չեմ լսուալու քեզի: Թող մարի հոգ ճա-
ղիլ դուրս:

— Դէ՛ք, բաց գրկիլ, Սէլան, բաց թեւերդ,
անա յոյժը շրջումս, անա վազը փոթոր-
կին. բաց թեւերդ ու նորին փարած քո
խնկիլ: Դարձնիլ, նորին շուրջը շնչիւս,
ալիքներու ծնծկաւոր մէջն, անցի՛ր
այն նոր ու մեծ ամանութիւն, նոր գոյու-
թեան ու նոր կեանքի, այն որ խոստացի
ես ինձի: Բաց գրկիլ, Սէլան...

Ու ապրիլին է նիւթապալտ սեղանի
արեւմտի իւր կանցիկը վերջին ճիւղը:
Այսպէս լուծնալ, մենք աշխարհից Շահ-
թի «Հին աստուածներ» դրաման անցկա-
ցնում:

Նեղ քննութեան բովից: Աւելորդ տեսարան-
ները դուրս ձգելով, իրաւի այս նոր երկը
մի գեղեցիկութիւն պէտք է նկատուի մեր
թատրոնական ընդերքում: Դասաւանդ
նկատի առած նախ պատկերաւոր ներդաշ-
նակ լեզուն:

Անդուշ Լ. Շահթի իր դրաման զրելիս
գտնվել է մի շարք եւրոպական և ուսու-
կան հոգի գրելիների ազդեցութեան տակ:
Այսպէս են, օրինակ, Իւսէն, Ջուլիէրման,
Հատուկուման, Լեւոնտով, Տօրտօյ, Պըշե-
րիսկի և այլն: Մանաւանդ առաջինի ծայ-
րայեղ անհատականութեան գաղափարը էա-
կան կնիք է դրոշմի Շահթի վանահօր
վրա: Յանդիմանքների տեսարանները առ-
նված են Հատուկումանի «Պարտաւորված
գնալից»:

Լ. Շահթի իր «Հին աստուածներ» դրա-
մայով մեր իրականութեան մէջ նոր
կեանքի երգն է երգում: Մեր աղբարիկ
գրականութիւնը դեռ շատ աղքատիւ քաղ-
դէպի է կարօտ: Եւ որքան շատ լինի
այդպիսիների թիւը, այնքան լաւ, այնքան
ցանկալի:

Նոր աստուածութեան գաղափարի որոն-
ման տնչիւնն է, որ կայ իրելայիստ բա-
նաստեղծի գրածները մէջ: Նա խիզախօրէն
ինքնուրոյն կերպով փորձում է գնիլ առա-
ջին տարեալը այն հոգի կամուրջին, որով
հայր եւ անցնելու է ու միախառնվելու
համար արդիային երազութեան: Սա-
կայն այդ կամուրջը պէտք ունի բացի
տարեալներից նաև գրականների ու հա-
տակաւ երկաթեղէն ձողերի Անդրաժող է,
շատ անհրաժեշտ, այդ կամուրջը, որով
հայր միւսների նման, ժամանակի ոյժից
զրկված, հին աստուածներից անցնել նոր
աստուածութեանը, թէ և դեռ միջադաւան,
անձկայի, սակայն երանելի...

ՕՐԱՎԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Աւարտական մամուլը յայտն
կերպով խօսում է, թէ Ռուսաստանի
հանդէս գալը Փորթ-Ասիայում անխու-
սափելի է. Իբր թէ այդ հանդէս գա-
լուն ձգտում է Բերիտօյլը:

«Ք. Բ.»-ին հետագրում են Վիէն-
նայից, որ Կ. Պօլսում երկրի կայ, թէ
Հայաստանում և Գլխաւորում կարող
է հակադրադիմադրելու առաջ գալ,
որովհետեւ այստեղ երկրաստոր-թիւր-
բեր ժողովրդականութիւն չեն վայե-
լում:

Կ. Պօլսից հետագրում են, թէ
հաստատ պարզվեց, որ Թիւրքիայի նոր
յեղաշրջումը կատարվեց Աւարտայի և
Գերմանիայի անմիջական աշակղու-
թեանը: Տիրահաշի ֆօն դէր-Պօլց
փաշայն, «Մ. Բ.» ի թղթակցի ասելով,
յեղաշրջումից անմիջապէս յետոյ ու-
ղարկվել է արեւելեան Անատոլիա, դէ-
պի ուսուական սահմանը:

Աւարտական տեղեկութիւնների
համաձայն՝ Անդրիան, Տրանսիան և Ռու-
սաստանը քայլեր են անում չեզոքաց-
նելու Դարդանէլը և Բոսֆորը:

Կ. Պօլսից առաւոր դեպիսան Գլի-
սը հետագրում է, որ յեղաշրջումը
կատարեցին 200 զինուոր էնվիլ-բէյի
առաջնորդութեամբ: Ռուսներին վտանգ
չէ սպառնում:

Բերլինի մամուլը պահանջում է
Գերմանիայից դուրս գալ եւրոպական
համբարից և միաժամանակ ազդել եր-
կու կառող կողմերի վրա:

Կ. Պօլսից հետագրում են, որ
կոմիտէտին թշնամի զորքերը պա-
հանում են զինուորական գաղափարին
յանձնել: Նաղըմ փաշային պահանջ էն-
վիլ-բէյին և նրա հետ եղած 22 օֆի-
ցէրներին, որ զգեստները փոխած
մտան Բ. Դուրսը:

Կ. Պօլսում երկուստար-թիւր-
բեր ընդհանրութեան շարունակվում
են: Օր ու գիշեր ձեռքադրութիւն
ներ են կատարվում կոմիտէտին հա-
կաւորութեան շրջաններում. որոնք
եռաւորով պատրաստվում են հակադր-
դաշրջում: Դրութիւնը աստիկ յու-
ղիչ է:

Կ. Պօլսից հետագրում են, որ
էնվիլ-բէյը ծագումով լին է. նրա
հայրը մասնակցեց լեւիական ապստա-
րութեան մէջ. յետոյ փախուա թիւր-
քիս և իր նամակները մէջ, որ ուղար-
կում է Ռուսաստան իր ծնողներին,
էնվիլ-բէյը աւելացնում է «Բօրժեցիկ»
ստորագրութիւնը:

Բալիսեան պետութիւնների
զորքերը հրաման ստացան զորն առ
դէպի Ձաթալլայի դիրքերը:

«Mat. Zeit.»-ը հաստատում է,
որ սուլթանը կամենում է հրաժարվել
զանից: Նա արդէն այդ մասին խոր-
հրդակցել է շէյխ-ու-Խալամի հետ,
պատահաբանելով իր վճիռը նրանով,
որ նա այժմ գերի է պալատում:

Աւարտական սպասում է, որ Ռու-
սաստանի ամենափոքր անգլոյշ քա-
յա:

ը նկատելուն պէս պատերազմի փոքր
հնչեցնել արշաւելով իր զորքերով դէպի
Նոյօ-Բաղադրի տանջվել: Անհատարակ
յայտնի դեմահագետների կարծիքով եւ-
րոպական խաղաղութիւնը ներկայ թո-
պէին կարված է ամբողջովին Ռուսաս-
տանի գործելակերպից:

Թիֆլիսի պոլիտեխնիկումի մա-
սին կազմված օրինագիծը կը ներկա-
յացվի Պետական Դումային այս նրա-
տաշրջանին, Ինչպէս հաղորդում են,
ներքին գործերի մինիստր Մակլակովը
այդ հարցի առթիւով համակարծիք է
կովկասի փոխարքային:

Ինչպէս հաղորդում են, շուտով
հրաժարվելու է աւետարի ու արդիւնա-
բերութեան մինիստր Տիւրաշևիլը:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

17 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ Հողային բարենորոգու-
թեան գլխաւոր վարչութիւնը 1913 թ-ի
նախաշարժով պահանջում է 109,520 յուրի
Կրիմի հարաւային ափի ջրաբաշխութիւնը
բարելաւելու համար:

Յուլիսի 9-ին գործադու անելու առե-
թով ժողով կայացնելու համար քաղաքա-
պետը բանտարկեց 3 ամսով 15 հոգու, ու-
րոյցից 2-ը ուսանող են, մինը երգուհու-
հաւատարմատարի կին է, մինը քահանայի
որդի, մինը վարժուհի և մինը բանուր:

Ամբազի՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱՎԱՆԹԱՐ
Հրատարակչին՝ Ա. ԲԱՎԱՆԹԱՐ
Յ. ՏԵՐ-ՄԱԿՈՍԵԱՆ
2. ԱՌԱՔԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Միւսերն որ գործ կածէի

Ձեր պրէպարատը կա ստափի ամսկում էի կապու-
թիւնից, փորձուցելից, ցանկից, կրծքի տակ կրծք-
ութիւնի զգայող, տաղից և այլն: Առաւելապէս ամս-
կում էի ինձ տալիս մտաւորապէս եղանակը: Նյւթ
իմ բոլոր ամսկները վերջացան, ես ինձ գտաւ իմ
կատարելապէս ստեղծ, որի համար և ձեռնից շատ
շնորհակալ եմ: Սեպտ. 21, Տիֆլիսօրդոյ: Ա. Նեփի:

Դ Ե Ղ Ա Տ Ո Մ Ս Ը

Տոսակալ դեպիսից կամ դեպիսիցից փերցեք
«Գր. Միլերի Սոսիոլոգիկ» մի տուփ և ընդունե-
ցէ 1-2 տարեկալ օրական 3 անգամ, մինչև որ ձեր
մարդուրիկը կանխուար ընթացք կը ստանալ:

(Ո. 18971)

ՀՅՈՐԹԻՒՆ (ՏՐԻԳՂԵՐ) ԴԵՄ

Ն Ո Ր Մ Ք Ն Ո Ց

«S A L O» ՊԵՇԻԼԻՆ

Երկրորդում է արդեւ և արժանաւորապէս, և
սովորական լիպոլիթում համարվում է իրական հա-
տաւան: Երկրորդում հոգեւորական ձեռնարկ կը փո-
թարկելին: Իսկական փոփոխութիւնը արեւմտեան
համար 1 ր. և 1 ր. 80 ր.:

Միւսմանում իսկ է ճերգործում քէ տու-
ր. քէ յարաւս. բնոր ունեցող դիվերսում
է կարճ ամսականի բնորոշում վերաց-
նում է անհայտաւ: Երբեք:

ԳՆԵՐՏԵՐ՝ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, ՐԱՅՅԵՑԿԱՅԱ ՄԱ, № 7,
ԱՌԵՔԵԱ. Բ. ԿՈՂԵՅԻԱ:
Ուղարկելու է վերադր փաշային: Ժամապար-
տաբար օգտուելի ակադեմի